

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
МУЗЕЙ-ИНСТИТУТ ГЕНОЦИДА АРМЯН

ԿԱՐԻՆԵ ԷՄԱՆՈՒԼՈՎՆԱ
ԽՈՒԴԱԲԱՇՅԱՆ

КАРИНЕ ЭММАНУИЛОВНА

78 Ар

Խ-96

ХУДАБАШЯН

ԵՐԵՎԱՆ



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСКУССТВ

АРМЯНСКИЕ ЖЕНЩИНЫ
МАТЕРИАЛЫ К БИБЛИОГРАФИИ
1977

КАРТИННО-МУЗЕЙНАЯ
ЖУРНАЛИСТИКА



ԱՐԴԵՍԻ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԳԵՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ИСКУССТВ

**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
МУЗЕЙ-ИНСТИТУТ ГЕНОЦИДА АРМЯН**

**АРМЯНСКИЕ ЖЕНЩИНЫ УЧЕНЫЕ
МАТЕРИАЛЫ К БИБЛИОГРАФИИ
N1**

**КАРИНЕ ЭММАНУИЛОВНА
ХУДАБАШЯН**

**Издательство "Гитутюн" НАН РА
Ереван 1999**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅ ՆՇԱՆԱՎՈՐ
ԿԻՆ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐ
ՆՅՈՒԹԵՐ
ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ
N1

ԿԱՐԻՆԵ ԷՄԱՆՈՒԵԼԻ
ԽՈՒԴԱԲԱՇՅԱՆ

ՀՀ ԳԱՄ «Գիտություն» հրատարակչություն
Երևան 1999

**Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության
թանգարան - ինստիտուտի գիտական խորհրդի
որոշմամբ**

Պատասխանատու խմբագիր՝ Լ.Ա. Բարսեղյան

**Печатается по решению ученого совета
Музея — института геноцида армян**

Ответственный редактор: Л.А. Барсегян

**Ներածականը՝ Ա.Հ. Բաղդասարյանի
Մատենագիտությունը կազմել է Ա.Հ. Բաղդասարյանը**

**Вступительная статья А.О. Багдасарян
Библиография составлена А.О. Багдасарян**

ԿԱՐԻՆԵ ԷՄՍԱՆՈՒԵԼԻ ԽՈՒՂԱԲԱՇՅԱՆԻ

Կյանքի եւ գործունեություն

Հիմնական տարեթվերը

Կարինե Էմմանուելի Խուղաբաշյանը ծնվել է 1929 թ. հուլիսի 7-ին Թբիլիսի քաղաքում:

1936-1940 թ.թ. սովորել է Երևանի Պուշկինի անվ. միջնակարգ դպրոցում, այնուհետև՝ Չայկովսկու անվ. երաժշտական տասնամյա դպրոցում, որն ավարտել է 1947 թ.:

1952 թ. գերազանց դիպլոմով ավարտել է Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի տեսական-կոմպոզիտորական ֆակուլտետը (գիտական ղեկավար՝ պրոֆ. Գ.Տիգրանով):

1953 թ-ից անցել է Լենինգրադի Ռիմսկի-Կորսակովի անվ. պետական կոնսերվատորիայի և ապա ՅԽՍՀ ԳԱ Արվեստի Ինստիտուտի ասպիրանտուրան /գիտ. ղեկավար՝ պրոֆ. Բ. Ս.Քուշնարյան/:

1960 թվականից աշխատել է Արվեստի Ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող երաժշտության պատմության և տեսության բաժնում /1960 - 1978 թ.թ./, ապա որպես ավագ գիտաշխատող / 1978 - 1984 թ.թ. /: 1984 թվականից առ այսօր ժողովրդական արվեստի բաժնի վարիչ է:

1970 թ.: Շնորհվել է արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան:

1968 թ-ից: ԽՍՀՄ Կոմպոզիտորների միության անդամ է:

1970-ից Հայաստանի թատերական գործիչների միության անդամ է:

1975 - 1981 թ.թ. Հայաստանի Կոմպոզիտորների միության երաժշտագիտական սեկցիայի նախագահ է:

1979 - 1998 թ.թ. նույն միության վարչության անդամ է:

1980 - 1989 թ.թ. "Սովետական արվեստ" ամսագրի խմբագրական կոլեգիայի անդամ է:

1985 թվականից ՀՀ ԳԱ Արվեստի Ինստիտուտի գիտխորհրդի անդամ է:

Основные даты жизни и деятельности КАРИНЕ ЭММАНУИЛОВНЫ ХУДАБАШЯН

Карине Эммануиловна Худабашян родилась 7 июля 1929 г. в г. Тбилиси.

1936 - 1940 г.г. Училась в Ереванской средней школе им. А.С. Пушкина, затем - в музыкальной десятилетке им. П.И. Чайковского, которую окончила в 1947 году.

1952 г. С отличием окончила теоретико-композиторский факультет Ереванской государственной консерватории им. Комитаса (научный руководитель проф. Г.Г. Тигранов).

С 1953г. проходила аспирантуру в Ленинградской государственной консерватории им. Н.А. Римского-Корсакова, затем в Институте искусств АН Арм. ССР /научный руководитель - проф. Х.С.Кушнарев/.

С 1960 г. работает в Институте искусств: младшим научным сотрудником в отделе истории и теории музыки /1960 - 1978г.г./, старшим научным сотрудником /1978 - 1984 г.г./.

С 1984 года по сей день заведующий отделом народного искусства.

1970г. Присуждена ученая степень кандидата искусствоведения.

С 1968г. член Союза композиторов СССР.

С 1970г. член Союза театральных деятелей Армении.

1975 - 1981 г.г. - председатель музыковедческой секции Союза композиторов Армении.

1979 - 1998 г.г. - член Правления того же Союза.

1980 - 1989 г.г. - член редколлегии журнала "Советакан арвест".

С 1985 г. - член Ученого совета Института искусств НАН РА.

ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Կարինե Էմմանուելի Խուղաբաշյանը ծնվել է 1929 թ. հուլիսի 7-ին Թբիլիսի քաղաքում, ինժեներ Էմմանուել Խուղաբաշյանի և դաշնակահարուհի Ռեգինա Եղիզարովայի ընտանիքում: Ավարտել է Երևանի Չայկովսկու անվան երաժշտական տասնամյա դպրոցի դաշնամուրային բաժինը: Նրա ուսուցիչներն են եղել Մ.Ա. Տոնյանը, Լ.Մ. Պուլիկը, Վ.Ս. Բելկեվիչը, Յ.Պ. Գիմոսյանը և ուրիշները: Մասնագիտական ղեկավարն էր՝ Ռ.Ք. Անդրեասյանը:

1947 թ. Խուղաբաշյանը ընդունվել է Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի տեսական - կոմպոզիտորական ֆակուլտետը և, ավարտել է 1952 թ. արժանանալով գերազանց դիպլոմի: Նրան դասախոսել են Մ.Ա. Տերյանը /սոլֆեջիո/, Ռ.Ա. Աթայանը և Տ.Գ. Տեր-Մարտիրոսյանը /հարմոնիա/, Գ.Ս. Չբոտարյանը /պոլիֆոնիա/, Ս.Վ. Կոպտևը /երաժշտական ձևերի վերլուծություն/, Գ.Գ. Տիգրանովը և Ա.Ա. Բարսամյանը /արտասահմանյան և ռուսական երաժշտության պատմություն/, Ջ.Տ Վարդանյանը /երաժշտության համընդհանուր պատմություն/ և ուր.: Ուսման տարիներին բազմիցս հանդես է եկել զեկուցումներով ուսանողական գիտական կոնֆերանսներին / այդ թվում "Ռիմսկի-Կորսակովի օպերաների մասին", "Պուշկինը երաժշտության մեջ"/: Ջբաղվել է հասարակական գործունեությամբ: Նրա ակտիվ մասնակցությամբ կազմակերպվել են ժամանակին մեծ համբավ վայելող "կաղամբատոները" և այլ ուսանողական երեկոներ: Մասնագիտացել է երաժշտության պատմության բնագավառում: Պրոֆ. Գ.Տիգրանովի ղեկավարությամբ գրված "Գ. Եղիզարյանի սիմֆոնիկ ստեղծագործությունը" դիպլոմային աշխատանքը հետագայում կոմպոզիտորին նվիրված մենագրության հիմքը դարձավ:

Կոնսերվատորիան ավարտելուց անմիջապես հետո Խուղաբաշ-

յանն իր գրիչը փորձեց հրապարակախոսության բնագավառում: Այսուհետև երաժշտագիտական այս ոլորտը ժանրային ողջ բազմազանությամբ իր կարևոր և ուրույն տեղը գրավեց հուղաբաշյանի ստեղծագործական կյանքում: Համերգներին, երաժշտական ներկայացումներին նվիրված բազմաթիվ գրախոսականների հեղինակ է / "Սևիլյան սափրիչ", "Վեստ-Սայոյան պատմություն", "Տանհոյգեր", "Կրակե օղակ" և այլն/: Մի շարք հոդվածներում վերստեղծվում և ամբողջացվում են հայ ականավոր երաժշտական գործիչների ստեղծագործական դիմանկարները /Ս. Օգանեզաշվիլի, Ա. Քոչարյան, Հ. Դանելյան, Զ. Դոլուխանյան, Գ. Չեբոտարյան, Ա. Տերտերյան¹/: Երեխաների գեղագիտական դաստիարակությամբ, հայկական ֆիլիհարմոնիայի գործունեությամբ, ինչպես նաև Հայաստանի երաժշտական կյանքի այլ ոլորտների լուսաբանմանը և վերլուծմանը նվիրված քննադատական հոդվածները, խմբագրատնային զրույցները հրապարակվել են համրապետական / "Կոմունիստ", "Սովետական Հայաստան", "Կոմսոմոլեց", "Ավանգարդ" օրաթերթեր, "Սովետական արվեստ" ամսագիր / և համամիութենական / "Պրավդա" օրաթերթ, "Սովետսկայա մուզիկա" ամսագիր/ մամուլում: Խուղաբաշյանի հրապարակումները աչքի են ընկնում հարուստ լրատվությամբ, մտահորիզոնի բացառիկ լայնությամբ, սուր քննադատական շնչով: Դրանք անաչառ են, դյուրընթեռնելի և բանականության, խորագիտակության և հուզականության ներդաշնակ միասնության օրինակ կարող են ծառայել:

Ասպիրանտուրան Խուղաբաշյանը անցել է 1953 թ.-ից Լենինգրադի Ռիմսկի-Կորսակովի անվ. պետական կոնսերվատորիայում, այնուհետև ՀԽՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտում: Պրոֆ. Բ.Ս. Քուլչնարյանի ղեկավարությամբ սկսված "Բազմաձայնության զարգացման վաղ շրջանը հայ երաժշտության մեջ" թեկնածուական աստիճանի հայցման դիսերտացիան հաջողությամբ պաշտպանվեց

¹ Հարկ է նշել, որ Խուղաբաշյանն առաջին երաժշտագետն է, որը համոզես եկավ կոմպոզիտոր Ա.Տերտերյանի ստեղծագործությամբ նվիրված ծավալուն վերլուծական հոդվածներով:

1970թ.: 1977 թ. այն լույս տեսավ “Չայ երաժշտությունը մոնոդիայից դեպի բազմաձայնություն” խորագրով: Սա տեսական հետազոտություն է՝ նվիրված ազգային կոմպոզիտորական դպրոցի նախկինում քիչ լուսաբանված վաղ, “նախակոմիտասյան” շրջանին: Աշխատության մեջ քննվում է նախնական բազմաձայն ձևերի յուրատեսակ հարմոնիկ կառուցվածքային տիպարների կազմավորման ընթացքը հայ պրոֆեսիոնալ երաժշտության մեջ:

Հեղինակն անդրադառնում է Կոմիտասի անմիջական նախորդների՝ Բ. Կարա-Մուրզայի, Ն. Տիգրանյանի, Մ. Եկմալյանի կյանքին և գործունեությանը, նրանց կողմից իրականացված հայ ժողովրդական /գեղջկական, քաղաքային/, ժողովրդա-պրոֆեսիոնալ /գուսանա-աշուղական/ և պրոֆեսիոնալ /հոգևոր և աշխարհիկ/ մոնոդիաների բազմաձայն մշակումների առանձնահատկությունների բացահայտմանը և վերլուծմանը: Մենագրության մեջ առաջին անգամ նշված կոմպոզիտորների տեղծագործությունը դիտարկվում է XIX դարի վերջի և XX դարի սկզբի եվրոպական և ռուսական երաժշտության ավանդույթների և զարգացման միտումների հունով: Այս ժամանակաշրջանն, ինչպես հայտնի է, նշանավորվեց ազգային կոմպոզիտորական դպրոցների ձևավորմամբ և այնպիսի երկերի հորինմամբ, որոնց մեջ համադրվում էին համաեվրոպական պրոֆեսիոնալ երաժշտության նվաճումներն ազգային երաժշտական արվեստի արտահայտչամիջոցների ամենալայն շրջանակի հետ: Հետազոտության մեջ ընտրված տեսանկյունը հնարավորություն ընձեռեց հեղինակին բացահայտել և իմաստավորել Կարա-Մուրզայի, և հատկապես Տիգրանյանի և Եկմալյանի երկերում առկա մի շարք, եվրոպական դասական հարմոնիայի տեսակետից, անսովոր երևույթներ: Բազմաձայնության վերլուծությունը այս կոմպոզիտորների երկերում հեղինակին հանգեցրեց այն եզրակացությանը, որ ակորդների ընտրությունը, դրանց հաջորդականությունը, տոնայնական պլանների փոփոխումը և հարմոնիկ լեզվի մյուս մանրամասները մեծ մասամբ պայմանավորված են հայկական մոնոդիաների ծայնակարգային

(լադային) ինքնատիպությամբ: Այլ կերպ ասած, հայ կոմպոզիտորական դպրոցի արդեն իսկ վաղ փուլում “հարմոնիան հասունանում էր, ազգային մոնոդիայի հիմքով”²: Նշված օրինաչափությունն արտահայտվեց /ամեն անգամ՝ յուրովի/ բոլոր հայ մեծ կոմպոզիտորների երկերում: Խուղաբաշյանի կողմից ընտրված դիտարկման այս տեսակետը ժամանակին բարձր գնահատվեց որպես կարևոր ներդրում խորհրդային երաժշտագիտության մեջ³:

Զայնակարգի (լադի) և հարմոնիայի կամ “հորիզոնական և ուղղահայաց” առանցքների փոխներգործության խնդիրը դիտարկման առարկա դարձավ նաև “Ժողովրդական երաժշտության մշակման որոշ սկզբունքները Ա. Սպենդիարյանի ստեղծագործության մեջ” հոդվածում /Երևան, 1973/ :

1960 թվականից Խուղաբաշյանը աշխատում է ՀԽՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտում, երաժշտության պատմության և տեսության բաժնում. սկզբում որպես կրտսեր և ապա, 1978թ.՝ ավագ գիտաշխատող: Այստեղ նա ավարտում է դիսերտացիան, հրատարակման նախապատրաստում անվանի հայ կոմպոզիտոր Գ. Եղիազարյանի կյանքին և ստեղծագործությանը նվիրված գիրքը /Երևան, 1966/: Նույն տարիներին են գրվում նաև “Ա. Սպենդիարյանի “Ալմաստ” օպերայի լիբրետոյի հեղինակ՝ Սոֆիա Պարոնկը” /Երևան, 1973/, “Մուղանը XIX դարի ավարտի և XX դարի սկզբի հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների մեջ”, “Զև - կառուցվածքը և ծայնագրման սկզբունքները XIX դարի վերջին Հայաստանում գրառված մուղամներում” /Տաշկենտ, 1978, 1981/, “Կոմիտասը և նրա նախորդները” /Երևան, 1981/ հոդվածները, ակնարկներ հանրագիտարաններում և այլն: Հարկ է նշել նաև Խուղաբաշյանի կողմից կազմած “Խորհրդային Հայաստանի երաժիշտ - կատարողները” բառարանը /100 անուն, ձեռագիր/, «Եղիշե Բաղդասարյան - կյանքը և ստեղծագործությունը» (1965) նույնպես ձեռագիր: Նույն տարիներին

² Տե՛ս . Խուղաբաշյանի դիսերտացիայի պրոֆ. Յու. Ն. Տյուլինի գրախոսականը, 14. 06. 70 թ., էջ 4:

³ Տե՛ս . նշ. Յու. Ն. Տյուլինի գրախոսականը, էջ 3:

Խուղաբայանը զեկուցումներով հանդես է եկել հանրապետական, համամիութենական, միջազգային տարբեր գիտաժողովներին⁴, վարել է հայֆիլհարմոնիայի դասական սիմֆոնիկ երաժշտության համերգները, հրապարակումներով հանդես եկել մամուլում:

1984 թ. մինչև օրս Խուղաբայանը ղեկավարում է ՀՀ ԳԱԱ ԱԻ ժողովրդական արվեստի բաժինը: Այստեղ առավելագույնս դրսևորվեց Խուղաբայանի կազմակերպչական տաղանդը, շրջապատը ստեղծագործական եռանդով լիցքավորելու, ազգային երաժշտական մշակույթի զարգացմանը առավել նպաստող գիտական ծրագրեր մշակելու նրա կարողությունը:

Այն է՝ “Հայ ավանդական երաժշտություն” մատենաշարը, որի մի քանի հատորներ պատրաստ են հրատարակման /Բ. Քուչնարյանի, Ս. Լիսիցյանի գիտարշավների նյութերով, հայ ժողովրդական նվագարանային երաժշտության իր տեսակի մեջ եզակի ժողովածուն և այլն/: Այն է՝ ժողովրդական երաժշտության քարտավորումն ու անձնագրավորումը: Բաժնի գիտական գործունեության ոլորտ են ներմուծվել ժողովրդական երգի վանկաչափական վերլուծության մեթոդը, դիցաբանական դարոցի նվաճումները: Միաժամանակ այստեղ հետազոտվում են երաժշտական ֆոլկլորագիտության այլ բնագավառների հետ կապված խնդիրներ /ազգաերաժշտագիտություն, օրգանոլոգիա, մեղեդիական աշխարհագրություն, պատմահամեմա-

⁴ Այստեղ հիշատակենք միայն մի քանիսը դրանցից, որոնց թեզերը հրատարակված չէին.

«Տեսական երաժշտագիտությունը Հայաստանում» (1974), «Ձայնակարգային համակարգի ծածկագրումը» (1975), «Գ.Տիգրանովի մանկավարժական գործունեությունը» (1978), «Եվրոպական և ազգային տեսությունները Արևելքի երաժշտության մասին» (1980), «Ամհենիտոնիկան հայ ժողովրդական երգերում և Կ.Կվիտկայի ներդրումը նրա ուսումնասիրության մեջ» (1980), «Սպ.Մելիքյանի ձայնակարգային կոնցեպցիան» (1981), «Արևելքի երաժշտությունը Բ.Քուչնարյանի հետազոտություններում» (1981), «Սասունցի Դավիթ» դյուցազնավեպի երաժշտական հատվածները, որպես ձայնակարգի գոյացման մի շարք սկզբունքների հնարավոր աղբյուր» (1986), «Գ.Տիգրանովի դասերը» (1994) և այլն:

տական երաժշտագիտություն, ժողովրդական երգի համակարգչային վերլուծություն/։ Արդյունքները հրապարակվում են։ Շարունակվում են Կոմիտասի երկերի ժողովածուի հրատարակման աշխատանքները։ Մշտապես կազմակերպվում են ժողովրդական երաժշտության հավաքման գիտարշավներ Հայաստանի, նաև Վրաստանի տարբեր շրջաններ /Թելավի, Լոռի, Եղեգնաձոր, Գորիս, Շիրակ և այլն/։ Գրառվել են 2000-ից ավելի ժողովրդական երգեր և գործիքային նվագներ։

Այսօր ժողովրդական արվեստի բաժինը Արվեստի ինստիտուտի առավել եռանդուն, համակարգված և արդյունավետ գործող ստեղծագործական կոլեկտիվներից է։

Խուղաբաշյանի կազմակերպչական տաղանդը դրսևորվեց նաև այն ժամանակ երբ նա Հայաստանի կոմպոզիտորների միության երաժշտագիտական սեկցիայի նախագահի պաշտոնն էր վարում /1975 - 1981/։ Այդ տարիներին բազմիցս կազմակերպվում էին երաժշտության տեսության, երաժշտական ֆոլկլորագիտության և այլ բնագավառների խնդիրներին նվիրված սեմինարներ, գիտական կոնֆերանսներ, նաև համոդիպումներ անվանի երաժիշտների հետ։

Խուղաբաշյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը լայն է և բազմապիսի։ Սակայն, առաջնայինը տեսական երաժշտագիտությունն է։ Այսպես, նա վաղուց արդեն զբաղվում է հայ տեսական երաժշտագիտության կարևորագույն ոլորտներից մեկի՝ ծայնակարգի ուսումնասիրման խնդիրներով։ Խուղաբաշյանի աշխատություններն այս ոլորտում կարող են լույս տեսնել առանձին գրքով։ Չայնակարգային "թեման" հիմնադրվեց դիսերտացիոն աշխատության մեջ։ Այստեղ, հայ բազմաթիվ մոնոդիաների ծայնակարգերի մանրակրկիտ վերլուծությունը, ինչպես վերը նշվեց, հնարավորություն տվեց հեղինակին նորովի դիտարկել առաջին հայ կոմպոզիտորների երկերի հարմոնիկ կառուցվածքը, "տեսնել" վերջինիս մեջ մոնոդիկ երաժշտության ծայնակարգերի յուրօրինակության արտացոլումը։

Նույն տարիներին գրված մեկ այլ աշխատության մեջ՝ "Կվարտ – կվինտային կառույցները և անգեմիտոնիկական հայ ժողովրդական

երգում” /Երևան, 1977/, Խուղաբաշյանը, շարունակելով և զարգացնելով Կոմիտասի, Սպ. Մելիքյանի, Ք. Քուշնարյանի, մասամբ նաև Կ.Կվիտկայի արտահայտած գաղափարները, առաջնորդվելով ֆոլկլորից քաղված բազմաթիվ օրինակներով, հիմնավորում է վերոհիշյալ ծայնակարգերի առանձնահատուկ բնորոշությունը հայկական ժողովրդական երգերի համար։ Միաժամանակ հեղինակը համարում է դրանք Կոմիտասի երկերում կվարտ-կվինտային և ոչ տերցիային կառուցվածքի այլ համահնչյունների գոյացման նախապայմանը։

Այնուհետև “Չայ մոնոդիկ երաժշտության լադային հնչյունաշարերը և հնչյունաշարերի անտիկ համակարգը” աշխատության մեջ /Երևան, 1984/, ծայնակարգային “թեման” զարգանում է համեմատական երաժշտագիտության հունով։ Հիմնվելով անտիկ տեսաբանների կողմից մշակված ծայնակարգային հնչյունաշարերի կառուցվածքային սկզբունքների վրա, ի նկատի ունենալով Կոմիտասյան փորձն այս ոլորտում, վերլուծելով ժողովրդական, ժողովրդա-պրոֆեսիոնալ և պրոֆեսիոնալ բազմաթիվ մոնոդիկները, Խուղաբաշյանն առաջարկում է “Երկօկտավային ծայնակարգային հնչյունաշարի լրիվ կատարյալ մոդուլյացիոն համակարգի” իր տարբերակը։ Այն, ըստ գիտնականի, ընկած է հայ մոնոդիկ երաժշտության հիմքում և մի շարք եզրերով առնչվում է ծայնակարգային հնչյունաշարերի անտիկ համակարգի հետ։ Վերջինս “չի նշանակում, որ անտիկ ծայնակարգերը ազդել են հայ մոնոդիկ երաժշտության ծայնակարգերի վրա, այլ հետևանք է այն բանի, որ անտիկ գիտնականների կողմից ստեղծված մոնոդիկ երաժշտության կատարյալ տեսությունը արտացոլում է հին Հունաստանի հետ մշտապես առնչվող մի շարք ժողովուրդների մոնոդիկ երաժշտության առանձնահատկությունները”։ Հնչյունաշարերի ինտերֆերենցիան, այն է՝ “մի քանի ավտոնոմ հնչյունաշարերի միակցումն ու համադրումը, նաև նրանց փոխադարձ կապի բացահայտումը”⁵, Խուղաբաշյանը կիրառել է “Չայ մոնոդիկ երաժշտության ծայնակարգային համակարգի մեկնությունը հայ երաժշտա-

⁵ В. Гошовский. Горани. Ереван, 1983. с. 55.

գիտության դասականների կողմից” հետազոտության մեջ /Երևան, 1987: Ուսումնասիրելով Դ. Լիմոնջյանի, Ն. Տիգրանյանի, Կոմիտասի, Սպ. Մելիքյանի ծայնակարգային կոնցեպցիաները, և ի մի բերելով դրանք, հեղինակը մոդելավորել է ինտերֆերենցիայի սկզբունքով կազմված միասնական ծայնակարգային հնչյունաշար, որն արտացոլում է հայ մոնոդիկ երաժշտության ծայնակարգային համակարգի առանձնահատկությունները ազգային երաժշտագիտության դասականների պատկերացմամբ:

Ծայնակարգի ուսումնասիրության մեթոդաբանության մեջ արժեքավոր ներդրում է հանդիսանում Խուդաբաշյանի “Մոդուլների համակարգը և դրանց կիրառումը ժողովրդական երգի ծայնակարգի նկարագրության ընթացքում” աշխատությունը /գրված է 1978 թ., հրապարակվել է 1996թ./: Այստեղ, Հայաստանում 1927 թ. հրապարակված բոլոր ժողովրդական երգերի /շուրջ 1000 նմուշ/ ծայնակարգային վերլուծության հիման վրա, մանրամասն մշակվել և համակարգի է բերվել հեղինակի ծայնակարգային կոնցեպցիան, “ծայնակարգ”, “ծայնակարգային հնչյունաշար”, “ինտոնացիա” և այլ հասկացությունների սահմանումից մինչև ծայնակարգի քանակային և որակային ցուցիչները: Միաժամանակ աշխատության մեջ ներկայացված է հեղինակի կողմից մշակված մոդուլների՝ պայմանական նշանների թվագրական համակարգը, որի միջոցով նկարագրվում է երգի ծայնակարգը: Այն հաջողությամբ փորձարկվել է Վ. Հոշովսկու կողմից ժողովրդական երգի ծայնակարգերի համակարգչային վերլուծության ընթացքում ⁶:

Ծայնակարգի խնդրին նվիրված հետազոտությունների տրամաբանական շարունակությունն ու զարգացումն է “Լրիվ կատարյալ համակարգի ծայնասահմանային դիֆերենցիացիայի անտիկ երաժշտա - տիեզերաբանական կոնցեպցիան և նրա դրսևորումը հայ երաժշտության մեջ” /Երևան, 1997թ./ աշխատությունը: Այստեղ հայ մոնոդիկ երաժշտության ծայնակարգերի հնչյունաշարերը դիտարկվում են հին աշխարհի երաժշտա - տիեզերաբանա-

⁶ В. Гошовский. Горани, с 26 – 35, 55 – 56.

կան կոնցեպցիայի, այսինքն տիեզերքի նախնական տարրերի մոդելի՝ տետրադայի և պենտադայի /երկիր, ջուր, օդ, հուր, եթեր/ տեսանկյունից: Բացահայտվում են «ա/ ծայնասահմանի /ռեգիստրի/ և ծայնակարգի, բ/ ծայնասահմանի և ժանրի փոխկապակցությունները, նաև Կոմիտասի նոտագրությունների սկզբունքները, կապված ծայնասահմանային շերտերի հետ»⁷:

Խուղաբաշյանի գիտական հետաքրքրությունների ոլորտում է՝ նաև Արևելքի բանավոր ավանդույթի պրոֆեսիոնալ երաժշտությունը: Այսպես, «Մուղամները XIX դարի ավարտի և XX դարի սկզբի հայ կոմպոզիտորների ստեղծագործության մեջ» /Տաշկենտ, 1978թ./, և «Ձև - կառուցվածքը և ձևագոյացման սկզբունքները XIX դարի վերջին Հայաստանում գրառված մուղամներում» /Տաշկենտ, 1981թ./ զեկուցումներով նա հանդես է եկել միջհամրապետական գիտատեսական կոնֆերանսում և միջազգային սիմպոզիումում: Նշված աշխատություններում դիտարկվում են անցյալ դարում և ներկա դարի սկզբում Հայաստանում տարածված և Ն.Տիգրանյանի ու Ա.Սպենդիարյանի կողմից հայ լավագույն մուղամաթիստներից գրառած մուղամների թեմատիզմի նշանակությունը, նաև ծայնակարգային յուրօրինակությունը, ձևագոյացման առանձնահատկությունները, որոնք մեծապես պայմանավորված են կարգավորված իմպրովիզացիայի սկզբունքներով: Այդ մուղամներն ապագայում նշված կոմպոզիտորների մի շարք դաշնամուրային, վոկալ և սիմֆոնիկ երկերի հիմքը դարձան: Հեղինակը նշում է Հայաստանում կատարվող մուղամների ձևին հատուկ լակոնիզմը, կանոնավոր և կուռ կառուցվածքը, վերջինս առանձնացնելով որպես մեզանում այս ժանրի կատարողական մեկնության յուրահատկություն:

Վերջին տարիներին Խուղաբաշյանն անդրադառնում է հայ ժողովրդական երգի տաղաչափության սկզբունքների հետազոտությանը / «Ամանակ, վանկաչափություն», Երևան, 1995թ., «Հայ ավանդա-

⁷ *Ծայնակարգերի պրոբլեմին նվիրված Խուղաբաշյանի հետազոտություններից են նաև նրա ձեռագիր աշխատությունները, որոնք ներկայացվել են զեկուցումների ձևով (տե՛ս տողատակ 4):*

կան երգի տաղաչափական համակարգի շուրջ», Երևան, 1997թ./: Զարկ է նշել, որ հայ երաժշտական ֆոլկլորագիտության այս ոլորտը, որը ժամանակին հիմնադրեց Կոմիտասն իր «Հայ գեղջկական երաժշտություն» հիմնավոր աշխատության մեջ⁸, հետագայում համարյա չի շոշափվել հայ երաժշտագետ – տեսաբանների կողմից: Այնինչ խոսքը ֆոլկլորի ուսումնասիրման այն առավել արդիական կարևոր ձևի մասին է, որը նպաստում է ժողովրդական երգի ամենախորքային, կայուն կառույցների բացահայտմանը: Այս աշխատությունները հատուկ նշանակություն ունեն մեզանում երգային տիպերի վանկաչափական հիմքով հետազոտական դպրոցի ստեղծման համար: Սա իր հերթին հնարավորություն կտա պարզաբանելու և ճշտելու ֆոլկլորի, և ավելին, մոնոդիկ երաժշտության երաժշտաբարբառային, ժանրային, պատմական և այլ հատկանիշների հետ կապված հարցերը:

Հայ երաժշտական ֆոլկլորագիտության մեջ վերջերս ի հայտ եկած մեկ այլ ուղղության միտումների արտացոլումն է Խուդաբաշյանի «Կարոս խաչ» վիպերգի բանաստեղծական տեքստի կրոնա - առասպելական արմատները/ իմաստաբանական վերլուծության փորձ/ «աշխատությունը /Երևան, 1996թ./: Ուղղությունը համադրում է ազգագրության դիցաբանական դպրոցի և երաժշտական ֆոլկլորագիտության նվաճումները: Ըստ այդմ, Խուդաբաշյանի աշխատության մեջ հետազոտվում են հնագույն ժողովրդական երգի իմաստաբանական կապերը հայերի հեթանոսական և քրիստոնեական պատկերացումների հետ:

Նույն համալիր հետազոտության սկզբունքով են գրված Խուդաբաշյանի մի շարք այլ աշխատություններ, նվիրված, մասնավորապես, հայ կոմպոզիտորների երաժշտա - բեմական ստեղծագործություններին:

⁸ *Աշխատությունը ստեղծվել է 1906թ., լույս է տեսել 1938թ. Փարիզում և ապա կրճատումներով՝ Կոմիտաս. «Դողվածներ և ուսումնասիրություններ» հայտնի ժողովածույում, Երևան, 1941:*

Դրանք են “Ա.Սպենդիարյանի “Ալմաստ” օպերայի լիբրետոյի հեղինակ Սոֆիա Պարոնկը” /1973թ./, “Ժանրի պարադոքսները /կամերային կոմիկական օպերայի խնդիրը Հայաստանում/” /1982թ./, “Բնագրին հավատարիմ լինելու աստիճանը /Գ.Եղիազարյանի “Արա Գեղեցիկ” բալետի մասին/” /1987թ./, “Տ.Չուխաջյանի “Արշակ II” օպերայի ժանրային բնորոշումը” /1999թ./: Հեղինակը մանրամասն հետազոտում է նշված օպերաների և բալետի գրական բնագրերը, առասպելը /“Ալմաստ”, “Արա Գեղեցիկ”/, հեքիաթը /Վ.Աճեմյանի “Կիկոսի մահը” կամերային օպերան/, հայոց վաղ միջնադարյան պատմությունը /“Արշակ II”/ և դրանց արտացոլումն ու մարմնավորումը լիբրետոյի և երաժշտության մեջ:

Նույն հունով է ստեղծված սուրբ Ալեքսանոսի մասին ավանդագրույցին նվիրված աշխատությունը/ “Ժողովրդական կրոնական տաղը Հայաստանի էպիկական երգային պոեզիայում”, Երևան, 1998թ./, որտեղ ավանդագրույցը դիտարկվում է իր “բովանդակային, կերպարային, բանաստեղծական և երաժշտական բաղադրիչների ամբողջությամբ”:

Հարկ է նշել, որ Խուդաբաշյանի գիտական ստեղծագործության գլխավոր հատկանիշներից է երաժշտագիտական խնդիրների ամբողջական, համալիր վերլուծությունը, ամենատարբեր բնույթի պատմական, քաղաքական, գեղարվեստական երևույթների լայն շրջանակի ընդգրկումով: Սա ծառայում է ուսումնասիրության առարկան իր ողջ բազմերանգությամբ գիտակցելու և լուսաբանելու նպատակին: Նշված հատկությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Դրանք են. գիտնականի պրպտող միտքը, լայն մտահորիզոնը, բազմագիտականությունը, որ կանխորոշում են Խուդաբաշյանի աշխատություններում առկա մտքի բացառիկ ազատությունն ու խորիմաստությունը: Դա Գ.Տիգրանովի, Ք.Քուլնարյանի, Յու. Տյուլինի, Ա.Քոչարյանի, Վ. Հոշովսկու դպրոցի ավանդույթների գործոնն է, այն երաժիշտ - գիտնականների, որոնց հետ Խուդաբաշյանին բախտ վիճակվեց մշտապես լինել ստեղծագործական կապերի մեջ և որոնց նա հիշում է մեծ երախտագիտությամբ:

Դա նաև Խուղաբաշյանի ընտանեկան ավանդույթների գործոնն է. նրա սկեսրայրն էր հայտնի գրականագետ Խ.Ա. Սարգսյանը, ամուսինը՝ մեծ պատմաբան, հայագետ, ասորագետ Գ.Խ. Սարգսյանը:

Այսօր Կարինե Էմմանուելի Խուղաբաշյանը Հայաստանի առաջատար երաժշտագետներից է: Նրա խոսքը մեծ կշիռ և հեղինակություն ունի, սպասվում է, ընկալվում է հետաքրքրությամբ, միտք է շարժում, հաճախ գիտական աշխույժ բանավեճերի առարկա դառնում, առաջ բերում հետևողներ: Այս ամենը հիմք է տալիս ակնկալելու նրանից նորանոր գաղափարներ, գիտական նվաճումներ:

Արվեստագիտության թեկնածու
Անահիտ Բաղդասարյան

Очерк жизни и научной деятельности КАРИНЭ ЭММАНУИЛОВНЫ ХУДАБАШЯН

Каринэ Эммануиловна Худабашян родилась 7 июля 1929 года в г. Тбилиси, в семье инженера Эммануила Исаковича Худабашяна и пианистки Регины Семеновны Едигаровой. Окончила Ереванскую музыкальную среднюю школу им. П.И. Чайковского по классу фортепиано у Р.Х. Андреасяна. Ее педагогами были также М.А. Тонян, Л.М. Пулик, В.М. Белькевич, О.П. Гиносян и др.

В 1947 – 1952 гг. училась на теоретико-композиторском факультете Ереванской государственной консерватории им. Комитаса. Здесь ей преподавали М.А. Терьян /сопрано/, Р.А. Атаян и Т.Г. Тер-Мартirosян /гармония/, Г.М. Чеботарян /полифония/, С.В. Коптев /анализ музыкальной формы/, З.Г. Вартанян /всеобщая история музыки/, Г.Г. Тигранов и А.А. Барсаян /история западно-европейской и русской музыки/ и др.

В годы учебы Худабашян неоднократно выступала с докладами на студенческих научных конференциях /"Римский-Корсаков об опере", "Пушкин в музыке"/. Занималась общественной деятельностью. При ее активном участии организовывались известные в свое время консерваторские "капустинки", всевозможные вечера, фестивали. Специализировалась в области истории музыки.

Дипломная работа "Симфоническое творчество Г. Егиазаряна", написанная под руководством проф. Г.Г. Тигранова, легла в основу книги о композиторе.

Сразу же после окончания консерватории Худабашян пробует перо в публицистике, которая во всем своем жанровом многообразии стала одной из ипостасей ее творческой деятельности. Ею написано множество рецензий на концерты, музыкальные спектакли /"Севильский цирюльник", "Вест-Сайдская история", "Тангейзер", "Огненное кольцо" и т.д./, ряд портретов крупных музыкантов /С. Оганезашвили, А. Кочарян, А. Данелян, З. Долуханян, Г. Чеботарян, А. Тертерян/¹.

¹ Следует особо отметить, что именно Худабашян принадлежат первые развернутые аналитические статьи о музыке выдающегося современного композитора А.Р. Тертеряна.

критические статьи, редакционные беседы, посвященные различным сторонам музыкальной жизни Армении - эстетическому воспитанию детей, деятельности Армянской филармонии, Союза композиторов и т.д., которые публиковались в республиканской/газеты "Коммунист", "Советакан Айастан", "Комсомолец", "Авангард", журнал "Советакан арвест"/ и всесоюзной /газета "Правда", журнал "Советская музыка"/ прессе. Публицистические статьи Худабашян отличаются богатой информативностью, исключительной широтой кругозора, временами довольно острой критичностью,. Одновременно с этим они объективны, "читабельны" и представляют собой органический сплав интеллекта, эрудиции, эмоций.

С 1953 года Худабашян проходила аспирантуру в Ленинградской государственной консерватории им. Римского-Корсакова, затем в Институте искусств АН Арм. ССР, под научным руководством проф. Х.С.Кушнарера. В 1970 г. была успешно защищена диссертация на звание кандидата искусствоведения под заглавием "Ранний этап развития многоголосия в армянской музыке". В 1977 г. она была издана Институтом искусств АН Арм.ССР отдельной книгой под названием "Армянская музыка на пути от монодии к многоголосию". Это теоретическое исследование, посвященное раннему, мало изученному, так называемому "докомитасовскому" периоду национальной композиторской школы. В нем прослеживаются процессы становления первичных многоголосных форм, своего рода гармонических моделей в армянской профессиональной музыке. Автор обращается к жизни и творчеству классиков, непосредственных предшественников Комитаса - Х. Кара-Мурзы, Н.Тиграпяна, М.Екмаяна, избравших путь многоголосной обработки армянских монодий - народных /крестьянских, городских/, народно-профессиональных /гусано-ашугских/, профессиональных /духовных и светских/. В монографии впервые творчество названных композиторов рассматривается в русле традиций и тенденций развития европейской и русской музыки 19-го - начала 20-го веков, определивших формирование национальных композиторских школ и создание произведений, синтезирующих в себе достижения общеевропейской музыки с самым широким спектром средств выразительности национального музыкального искусства. Именно этот ракурс позволил автору выявить и осмыслить ряд нестандартных с точки

зрения классической европейской гармонии явлений в произведениях Кара-Мурзы и в особенности Тиграняна, Екмаяна. Анализ многоголосия привел автора к заключению о том, что выбор аккордов, их последовательность, смена тональных планов и иные атрибуты гармонического языка в большинстве своем обусловлены ладовым своеобразием армянских монодий. Говоря иначе, уже на ранней стадии становления армянской композиторской школы "гармония вызревала на основе армянской монодии"².

Данный теоретический аспект, избранный Худабашян, в свое время был высоко оценен как значительный вклад в советское музыкознание³.

Тот же ракурс взаимодействия лада с гармонией, "горизонталь" с "вертикалью" стал предметом рассмотрения в статье "О некоторых принципах обработки народного материала в творчестве А.Спендиарова" /Ереван, 1973/

